ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«97ԱԴ-ԳՀԱՇՁԲ-20/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան <<10>> <<մ ար տ>> 2020թ., ժամը 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Զ. Տարախչյան

Անդամներ՝ Հ. Բաղդյան

Վ. Թադևոսյան

Լ.Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մելիքյան

97ԱԴ-ԳՀԱՇՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի 06.03.2020թվականին կայացած հայտերի բացման և ամփոփման նիստի ժամանակ գնահատող հանձնաժողովը արձանագրել էր հրավերով պահանջված փաստաթղթերի առկայության թերություններ հետևյալ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում( ծրարներում).

- «Վաղժան» ՍՊԸ-ի ներկայացրած ծրարում բացակա էր հրավերով պահանջված և կարգին համապատասխան սահմանված հայտի ապահովումը (բանկային երաշխիքի կամ կանխիկ վճարի ձևով սահմանված):

Ինչպես նաև «Վաղժան» ՍՊԸ-ի ծրարում բացակայում էր Դիմում հայտարարությամբ նշված և հրավերով սահմանված Հավելված 1.1-ը՝ Նկարագիր սարքերի և սարքավորումների մասին (նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումի, արտադրողների և երաշխիքային ժամկետների վերաբերյալ):

- «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի ներկայացրած ծրարում Հավելված 1.1-ը՝ Նկարագիր սարքերի և սարքավորումների մասին ցուցակում չափաբաժնի համարները սխալ էին նշված:

Բացման նիստի ժամանակ հայտարարվել և զգուշացվել էր մասնակիցներին հայտի ապահովման բացակայության դեպքում ընթացակարգի կասեցման մասին: Ինչպես նաև հավելվածներում տեղ գտած անհամապատասխանությունների շտկման հնարավորության մասին:

Արդյունքում գնահատող հանձնաժողովի որոշմամբ կասեցվել էր 97ԱԴ-ԳՀԱՇՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգը և հանձնարարվել էր գնումների համակարգող Գայանե Մելիքյանին սահմանված ձևով տեղեկացնել մասնակիցներին շտկել անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում հրավերի պահանջներին անհամապատասխան հայտ ներկայացրած մասնակիցները շտկել են անհամապատասխանությունը.

- «Վաղժան» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտի ապահովում կանխիկ վճարի ձևով, նաև շտկել և ներկայացրել է հրավերով սահմանված Հավելված 1.1-ը (Նկարագիր սարքերի և սարքավորումնների մասին):

- «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն նույնպես շտկել է իրավերով սահմանված Հավելված 1.1-ը (Նկարագիր սարքերի և սարքավորումների մասին):

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ Ո Ր Ո Շ Ե Ց՝

Համաձայն կարգի և հավերի .

1. «*97ԱԴ-ԳՀԱՇՁԲ-20/1* » ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել **«Ամարաս-Յուս»** ՍՊԸ – ն, որպես գնման ընթացակարգի պայմանները բավարարող մասնակից :
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
3. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:
4. Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ իր ներկայացրած՝գնային առաջարկի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

9. *Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.*

անձնաժողովի նախագահ՝ Զ. Տարախչյան Ուս գծ տն. տեղակալ

**Անդամներ՝** Հ. Բադոյան զինղեկ

Կ. Թադևոսյան բանվոր

Լ.Մարտիրոսյան ուսուցիչ

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մելիքյան